Հարց 1:
Ի՞նչ է լիզինգը

Պատասխան:
Լիզինգը ֆինանսական (վարկային) գործիք է, որի միջոցով հաճախորդը ձեռք է բերում հիմնական միջոցներ իր իսկ ընտրած մատակարարից:

Հարց 2:
Ի՞նչ հիմնական միջոցներ է հնարավոր ձեռք բերել լիզինգի միջոցով:

Պատասխան:
Սարքավորումներ և հոսքագծեր (արդյունաբերության, շինարարության, գյուղատնտեսության, առողջապահության, ՏՏ, վերականգնվող էներգիայի և այլ ոլորտներում օգտագործվող)
Գյուղատնտեսական և շինարարական տեխնիկա
Բեռնատար և մարդատար տրանսպորտային միջոցներ
Կոմերցիոն և արտադրական անշարժ գույք
Ջերմոցներ , սպանդանոցներ և սառնարանային տնտեսություն
Եվ այլ հիմնական միջոցներ

Հարց 3:
Ո՞վքեր կարող են դիմել լիզինգի համար

Պատասխան:
Լիզինգով հիմնական միջոցներ ձեռք բերելու համար կարող են դիմել իրավաբանական անձիք, ֆիզիկական անձիք և անհատ ձեռնարկատերերը:

Հարց 4:
Ինչու՞ լիզինգ

Պատասխան:
Հաճախորդը լիզինգով հիմնական միջոց ձեռք է բերում առանց լրացուցիչ գրավի (կարող են լինել բացառություններ),
Լիզինգի վճարումները հաճախորդը սկսում է իրականացնել, երբ արդեն լիզինգի առարկան գտնվում է իր տիրապետման ներքո,
ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳԸ մատակարարների հետ աշխատելու մեծ փորձ ունի և դա ծառայում է ի շահ հաճախորդի:

Հարց 5:
Ո՞վքեր են լիզինգի գործարքի կողմերը:

Պատասխան:
Լիզինգի գործարքի կողմերն են հիմանականում լիզինգային ընկերությունը (լիզինգատու), հաճախորդը (լիզինգառու) և մատակարարը (վաճառող): Մասնավոր դեպքերում կարող են հանդես գալ միայն երկու կողմ՝ լիզինգատու և լիզինգառու:

Հարց 6:
Ու՞մ է պատկանում լիզինգի առարկա հանդիսացող գույքի սեփականության իրավունքը:

Պատասխան:
Լիզինգի պայմանագրի գործողության ընթացքում սեփականության իրավունքը պատկանում է լիզինգային ընկերությանը, իսկ պայմանագրով ստանձնած բոլոր պարտավորությունները կատարելուց հետո գույքի սեփականության իրավունքն անցնում է լիզինգառուին:

Հարց 7:
Ի՞նչպես է ձևավորվում Լիզինգի առարկայի արժեքը, երբ մատակարարը օտարերկրյա կազմակերպություն է:

Պատասխան:
Լիզինգի առարկայի արժեքը ներառում է առարկայի ձեռքբերման, տեղափոխման, մաքսազերծման և այլ հարակից ծախսերը, որոնք ամբողջությամբ վճարվում են լիզինգատուի կողմից, իսկ հաճախորդը իրականացնում է միայն պայմանագրով սահմանված կանխավճարը:

Հարց 8:
Ի՞նչպես դիմել լիզինգի համար:

Պատասխան:

1. Ընտրել լիզինգի առարկան, որը ցանկանում եք ձեռք բերել և համապատասխան մատակարարին (կարող է լինել և՛ տեղական, և՛ օտարերկրյա)

2. Էլեկտրոնային կապի միջոցներով, հեռախոսով կապ հաստատել ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳԻ հետ կամ այցելել ընկերության գրասենյակ (ք.Երևան, Վ .Սարգսյան 10, 132-133 տարածք): Կարող եք դիմել նաև ԱԿԲԱ ԲԱՆԿԻ ցանակացած մասնաճյուղ:
3. Մեր աշխատակիցները կօգնեն ձեզ լրացնել լիզինգի հայտը և ներկայացնել պահանջվող փաստաթղթերը

Հարց 9:
Ինչ պետական աջակցության ծրագրեր են գործում լիզինգի համար:

Պատասխան:
Հետևյալ պետական աջակցության ծրագրերով լիզինգ ստանալու դեպքում ձեր տոկոսագումարները ամբողջությամբ կամ մասնակի կսուբսիդավորվեն պետության կողմից.

- ՀՀ-ում գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի աջակցության ծրագիր
- ՀՀ-ում Ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի աջակցության ծրագիր
- «Արտադրողականության խթանման միջոցառում» ծրագիր

Հարց 10:
Ի՞նչ արժույթով կարող է տրամադրվել լիզինգը:

Պատասխան:
Անկախ նրանից, թե ինչ արժույթով է գնվում լիզինգի առարկան, լիզինգի պայմանագիրը կարող է կնքվել ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով և Եվրոյով: